ՀՐԱՆՏ ՏԻԳՐԱՆԻ ԵՍԱՅԱՆ

Հայաստանի քիմիական հասարակայնությունը ծանր կորուստ կրեց։ Կյանքից հեռացավ Գիտությունների Ակադեմիայի Օրգանական քիմիայի ինստիտուտի հնագույն աշխատակից, նույն ինստիտուտի լաբորատորիայի վարիչ ՀՐԱՆՏ ՏԻԳՐԱՆԻ ԵՍԱՅԱՆԸ։

Եսայանը ծնվել է 1910 թ. Փարիզում, սփյուռքահայ մտավորականների՝ գրող Զապել և գեղանկարիչ Տիգրան Եսայանների ընտանիքում։

1929 թ. երիտասարդ Եսայանն ընդունվում է Փարիզի համալսարանի քիմիական ինստիտուտը, որը հաջողությամբ ավարտում է 1933 թ.։ 1934 թ. Եսայանների ընտանիքը փոխադրվում է մայր Հայաստան՝ 24-ամյա Եսայանը սկսում է աշխատել Կիրովի անվան գործարանի (այժմ «Նաիրիտ» գիտաարտադրական միավորում) գիտահետազոտական լաբորատորիայում որպես քիմիկոս, այնուհետև ղեկավարում հետազոտական բաժինը։

1945 թ. Եսայանն ընդունվում է ԳԱ Քիմիական ինստիտուտի ասպիրանտուրան, որն ավարտելուց հետո 1949 թ. հաջողությամբ պաշտպանում է թեկնածուական դիսերտացիա։ 1949 թվականից աշխատել է նույն ինստիտուտի օրգանական քիմիայի սեկտորում, այժմ ԳԱ Օրգանական քիմիայի ինստիտուտում, որպես կրտսեր գիտաշխատող, այնուհետև ավագ գիտաշխատող, իսկ 1959 թ. մինչև իր կյանքի վերջին օրը իբրև լաբորատորիայի վարիչ։

Եսայանը ճանաչված գիտնական էր։ Նրա խոշոր ծառայությունը նրանում է, որ նա Հայաստանում հիմնադրեց բույսերի պաշտպանության քիմիական միջոցների սինթեզի նոր ուղղությունը, ծավալելով խորը հետազոտություններ պեստիցիդների ստացման և ուսումնասիրման բնագավառում։

Նրա գիտական գործունեությունը սերտ կապված էր գյուղատնտեսության պահանջների, արտադրության հետ։ Երկար տարիներ համագործակցում էր Կիրովականի Քիմիական կոմբինատի հետ, գիտա-տեխնիկական մշակումներն ուղղելով դեպի ցիանուրաթթվի նպատակասլաց օգտագործումը։

Հրանտ Եսայանը հեղինակ է 100-ից ավելի գիտական հոդվածների և հեղինակային իրավունքների։ Նրա գիտական ղեկավարությամբ պաշտպանվել են մի շարք դիսերտացիաներ։

Գիտական աշխատանքները Եսայանը զուգակցում էր ակտիվ հասարակական գործունեության հետ։ Նա ավարտել է Մարքսիզմ-Լենինիզմի երկամյա երեկոյան համալսարանը, երկու անգամ ընտրվել է շրջանային սովետի դեպուտատ, բազմիցս եղել է տեղական Մենդելևյան կազմակերպության և տեղկոմի նախագահ։

Եսայանը պարգևատրվել է «Պատվո նշան» շքանշանով և մի շարք մեդալներով։ Արժանացել է Հայաստանի ԳԱ պատվավոր «Վաստակագրի»։

Հրանտ Եսայանը արտակարգ համեստ, ազնիվ, ռոմանտիկ հոգով, բարձր կուլտուրայի տեր անձնավորություն էր։

Հայտնի գիտնականի, հիանալի մարդու և լավ ընկերոջ հիշատակը միշտ վառ կմնա մեր սրտերում։